3 սեպտեմբերի 2020 թվականի N 1458 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 19-Ի N 1354-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 154-րդ հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 19-ի «Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության որոշ մարմինների և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև տեղեկատվություն փոխանակելու մասին» N 1354-Ն որոշման N 4 հավելվածի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«	4.	ՀՀ արտաքին առևտրի մաքսային վիճակագրության տվյալների բազաները (ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետությունների, ԵԱՏՄ անդամ հանդիսացող պետությունների) ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ տասանիշ ծածկագրերի, ըստ հետևյալ դաշտերի՝ գրանցման (հաշվետու) տարի, ամիս, ապրանքի ծածկագիր, անվանում (ԱՏԳԱԱ) ըստ խմբի (2-նիշ ծածկագիր), դիրքերի (4-նիշ ծածկագիր), արտահանման/նշանակման երկրի, ծագման երկրի, առևտուր անող երկրի, ընթացակարգ, գործարքի բնույթ, արտոնություններ (մաքսավճար (պետական տուրք), մաքսատուրք, ակցիզային հարկ, ԱԱՀ, բնապահպանական հարկ), չափի միավոր, քանակ (ըստ լրացուցիչ չափի միավորի), քաշ նետտո (կգ), մաքսային (վիճակագրական) արժեք (դրամ, ԱՄՆ-ի դոլար), գանձումներն ըստ հարկատեսակների (ակցիզային հարկ, բնապահպանական հարկ, ԱԱՀ, մաքսատուրք), մաքսատուրքի դրույքաչափ, մաքսատուրքի բացառության դրույքաչափ, հատուկ պաշտպանական միջոցներ (հատուկ տուրք, հակագնագցում, փոխհատուցում), ֆիզիկական/իրավաբանական անձ:	յուրաքանչյուր ամիս կուտակային կարգով	էլեկտրոնային	ամսվա ավարտից 20 օրվա ընթացքում	»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ

2020 թ. սեպտեմբերի 4
Երևան